ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԳԿՎ-ԳՀԵՁԲ-2018/2

ք. Երևան «15» 03 2018թ.

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը, ի դեմս Վարչության աշխատակազմի ղեկավար Վ.Հարությունյանի, որը գործում է Վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների և N 1.1 հավելվածով սահմանված գնացուցակի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (որը կսահմանվի սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվող համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում) (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ք.Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
հ/հ 900011145027	հ/հ 220083335012000
ՀՎՀՀ 02528489	ՀՎՀՀ 08417829
Վ. Հարությունյան	Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«15» 03 2018թ. կնքված
ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130-1	Տոյոտա Քեմրի 2.5, 2007 թ., Տոյոտա Քեմրի 2.4, 2013 թ., Տոյոտա Քորոլլա 2010թ., Հունդաի Սոնատա 2007 թ. ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ ***անհրաժեշտության առաջացման դեպքում նման պահանջ առաջանալու պահից 10 օրյա ժամկետում:***	դրամ	1000000	1	Կատարողը ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրում, իսկ ծառայության արդյունքը հանձնում է ք.Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեում:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Վ. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«15» 03 2018թ. կնքված
ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ ՏՍ-1 (տեխնիկական զննման /դիագնոստիկա/), ՏՍ-2 (վերանորոգման) ծառայությունների և ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

ՏՍ-1, ՏՍ-2 ծառայությունների և ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների
	1 չափաբաժին
	Արտասահմանյան արտադրության ա/մ Տոյոտա Քեմրի 2.5 2007թ., Տոյոտա Քեմրի 2.4, 2013 թ., Տոյոտա Քորոլա 2010թ, Հունդաի Սոնատա 2007 թ
ՏՍ-1 ներառվող ծառայությունների անվանում	
Սառեցման համակարգի ստուգում	10
Յուղման համակարգի ստուգում	10
Արտացման համակարգի ստուգում	10
ՔՏ-ի աշխատանքի ստուգում	10
ԱՔՏ-ի աշխատանքի ստուգում	10
Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	10
Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	10
Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	10
Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	10
Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	10
ABS համակարգի ստուգում	10
Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	10
Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	10
Թափքի վիճակի ստուգում	10
Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	
ՏՍ-2 ներառվող ծառայությունների անվանում	
Շարժիչի հանում և տեղադրում	15,000
Նույնը կոնդիցիոների դեպքում	10
Նույնը ԱՔՏ-ի դեպքում	10
Շարժիչի վերանորոգում	30,000
Նույնը V6-ի դեպքում	10
Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	6,000
Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5,000
Նույնը աջի համար (V6)	10
Նույնը ձախի համար (V6)	10
Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	15,000
Նույնը աջի համար (V6)	10
Նույնը ձախի համար (V6)	10
Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	5,000
Շարժիչի գլխիկի վերանորոգում	10

Փականի խցուկի փոխարինում	10,000
Նույնը V6-ի դեպքում	10
Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	6,000
Նույնը V6-ի ձախի դեպքում	10
Նույնը V6-ի աջի դեպքում	10
Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	5,000
Հրիչների փոխարինում SOHC	10
Ատամնավոր փոկի փոխարինում	10
Նույնը V6-ի դեպքում	10
Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	8,000
Նույնը կոնդիցիոների դեպքում	10
Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5,000
Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10
Մխոցային օղակների փոխարինում	15,000
Նույնը DOHC դեպքում	10
Նույնը V6-ի դեպքում	3,000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2,000
Յուղի պոմպի փոխարինում	1,000
Նույնը V6-ի դեպքում	10
Ղեկավարման բլոկի վերանորոգում	5,000
Օդի զտիչի փոխարինում	500
Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5,000
Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	16,000
Բենզամղիչի փոխարինում	9,000
Վառելիքի զտիչի փոխարինում	3,000
Տրամպորի վերանորոգում	10
3. Սառեցման և արտածման համակարգ	
Հովհարի փոկի հանում և տեղադրում	10
Հովհարի հանում և տեղադրում	3,000
Ռադիատորի հանում և տեղադրում	6,000
Նույնը կոնդիցիոների դեպքում	10
Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10
Ռադիատորի վերանորոգում	40,000
Թերմոստատի փոխարինում	6,000
Ջրի պոմպի փոխարինում	15,000
Նույնը կոնդիցիոների դեպքում	10
Ջրի պոմպի վերանորոգում	10
Նույնը կոնդիցիոների դեպքում	10
Ընդարձակող բաքի փոխարինում	1,000
Խլարարի հանում և տեղադրում	2,000
Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1,000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	10
Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	10
ՓՏ-ի հանում և տեղադրում	10
ՓՏ-ի վերանորոգում	10
ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	10
ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	10
Վազքաչափի շարժաբերի փոխարինում	10

ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	25,000
ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	45,000
Նույնը V6-ի համար	10
ԱՓՏ-ի հանում և տեղադրում	35,000
Նույնը V6-ի համար	10
ԱՓՏ-ի վերանորոգում	95,000
Նույնը V6-ի համար	10
ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	12,000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	10
Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	10
Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	10
Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	10
Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	10
Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	10
Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	10
6. Առջևի և հետևի կամրջակներ	
Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	10
Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	10
Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	10
Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	10
Կիսասռնու առանցքակալի փոխարինում	10
7. Կախոց	
Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	10
Տրավերսի հանում և տեղադրում	4,000
Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	5,000
Անվակունդի առանցքակալի փոխարինում	6,000
Նույնը հետին տանող ա/մ-երի համար	10
Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	6,000
Նույնը հետին տանող ա/մ-երի համար	10
Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	3,500
Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	2,000
Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	6,000
Զսպանակի հանում և տեղադրում	10
Զսպակի հանում և տեղադրում	[redacted]
Զսպակի վռանների փոխարինում	[redacted]
Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6,000
Ներքևի լծակի հանում և տեղադրում	3,000
Ներքևի լծակի վռանների փոխարինում	2,000
Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3,500
Միջին ձգանի հանում և տեղադրում	10
Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	10
Վերևի լծակի հանում և տեղադրում	10
Վերևի լծակի վռանների փոխարինում	10
Գնդե հոդակապերի փոխարինում	6,000
Ծայրակալների հանում և տեղադրում	3,500
Առջևի կայունարարի հանում և տեղադրում	1,000
Առջևի կայունարարի վռանների փոխարինում	3,000

Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	10
Հետևի զսպանակի փոխարինում	1,000
Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5,000
Հետևի ծգաձողի հանում և տեղադրում	10
Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	10
Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	4,000
Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	[redacted]
Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	
Անվաբացքի կարագավորում	5,000
Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2,000
8. Ղեկային մեխանիզմ	
Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	10,000
Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	10
Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	5,000
Նույնը կոնդիցիոների դեպքում	10
ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	10
ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	10
9. Արգելակային համակարգ	
Գլխ. գլանի հանում և տեղադրում	3,000
Գլխ. գլանի վերանորոգում	10
Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	3,000
Բանվ. գլանի հանում և տեղադրում	10
Բանվ. գլանի վերանորոգում	10
Արգելակային համակարգի օդահանում	1,000
Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1,000
Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	1,000
Առջևի սուպպորտի վերանորոգում	10
Հետևի սուպպորտի վերանորոգում	10
Արգելակային փողրակի փոխարինում	2,000
Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5,000
Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	10
Հետևի կոճղակների փոխարինում	5,000
Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5,000
Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5,000
Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	10
ABS-ի հանում և տեղադրում	5,000
ABS-ի վերանորոգում	5,000
Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	1,000
Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	1,000
10. Էլեկտրասարքավորում	
Էլեկտրասարքավորման վերանորոգում	12,000
Չափիչ սարքերի հանում և տեղադրում	10
Գեներատորի հանում և տեղադրում	6,000
Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	10
Գեներատորի վերանորոգում	6,000
Մեկնարկիչի հանում և տեղադրում	6,000

Մեկնարկիչի վերանորոգում	13,500
Առջևի լապտերի հանում և տեղադրում	6,000
Հետևի լապտերի հանում և տեղադրում	1,000
Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5,000
Վազքաչափի հանում և տեղադրում	10
Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	10
Սաքերի պանելի հանում և տեղադրում	10
Արագաչափի հանում և տեղադրում	10
Ազդանշանի հանում և տեղադրում	3,000
Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	4,000
Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	4,000
Վառոցքային լարերի հանում և տեղադրում	10
Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	10
Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	10,000
Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	10,000
Էլեկտրական տվիչների փոխարինում	1,000
Էլեկտրական անջատիչների փոխարինում	1,000
Վառոցքի մոմերի փոխարինում	8,000
Կոնդիցիոների լիցքավորում	20,000
Կոնդիցիոների վերանորոգում	5,000
11. Այլ ծառայություններ	
Անիվի հանում և տեղադրում	1,000
Անվադողի վերանորոգում	1,000
Անիվի բալանսավորում	1,000
Անիվի վալց	2,000
ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
1. Շարժիչ	
Շարժիչի բլոկ	1,000
Շարժիչի գլխիկ	1,000
Բարձիկ	25,000
Շարժիչի գլխիկի միջադիր	5,000
Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	5,000
Շարժիչի բաշխիչ լիսեռ	1,000
Շարժիչի փական դուրս մղող	1,000
Շարժիչի փական ներս մղող	1,000
Շարժիչի փականի խցուկ	2,000
Ծնկաձև լիսեռ	1,000
Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	10,000
Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	15,000
Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	5,000
Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	5,000
Հենակային տափողակ	10
Մխոց	5,000
Մխոցային օղակներ	10,000
Ատամնանիվ	10
Ատամնավոր փոկ	10
Շղթա	[redacted]
Հիդրոձգան	1,000

Հրիչ	10
Հիդրոհրիչ	3,000
Բաշման	1,000
Հանգստարար	10
Թափանիվ	10
Թափանիվի պսակ	10
Խցուկ բաշխիչ լիսեռի	7,000
Շկիվ	10
Շարժաթև	10
Կարտերի միջադիր	10
Միջադիր	1,000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2,500
Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4,000
Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6,000
Յուղի զտիչ	7,000
Յուղի պոմպ	1,000
Յուղի պոմպի շարժաբեր	10
Յուղի ռադիատոր	10
Յուղի փողրակ	10
Յուղի ծորակ	10
Վառոցքի մոմ	7,000
Ինժեկտորի ֆորսունկա	1,000
Վառելանյութի մղիչ էլեկտրական	30,000
Վառելանյութի զտիչ	15,000
Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	10
Վառելանյութի փողրակ	2,500
Աքսելերատորի ճոպան	10
Օդի զտիչ	11,000
Ջերմաստիճանային տվիչ	10
Յուղի տվիչ	2,000
Բաշխիչ լիսեռի տվիչ	2,000
Օդի ծախսի տվիչ	2,000
Արագաչափի տվիչ	10
Հովհարի տվիչ	10
Ջրի տվիչ	1,000
Բենզոբաքի տվիչ	10
Մարման ընթացքի կարգավորիչ	10
Մարման ընթացքի տվիչ	10
Ղեկավարման համակարգիչ	15,000
Պարապ ընթացքի տվիչ	10
Դրոսելային փականի տվիչ	1,000
Թթվածնի տվիչ	10
3. Սառեցման և արտածման համակարգ	
Հովհարի փոկ	10
Հովհար	5,000
Ռադիատոր	80,000
Ընդարձակող բաք	1,000
Ռադիատորի փողրակ	2,500

Թերմոստատ	15,000
Ջրի պոմպ	35,000
Ջրի պոմպի առանցքակալ	10
Ջրի պոմպի թևակ	10
Սառեցման հեղուկ 1 լիտր	2,000
Ջրի պոմպի սոնանիվ	10
Հոլովակ	10
Փոկ	17,500
Փոկ կոնդիցիոների	10
Ծորակ	10
Խլարարի ներդիր	1,000
Խլարարի կախոց	500
Անուր (Խամուտ)	500
Խլարար	1,000
Ռեզոնատոր	1,000
Վառարանի ռադիատոր	40,000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
Փոխանցման տուփ	10
ՓՏ-ի առջևի խցուկ	10
ՓՏ-ի հետևի խցուկ	10
ՓՏ-ի առանցքակալ	10
ՓՏ-ի առաջնային լիսեռ	10
ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	10
ՓՏ-ի եղանիկ	10
ՓՏ-ի ատամնանիվ	10
Համաժամիչ	10
Մուֆտ	10
ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	10
ԱՓՏ-ի զտիչ	18,000
ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	[redacted]
ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	
Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	4,500
ԱՓՏ յուղ, 1 լիտր	7,500
ՓՏ-ի առաջնային լիսեռ	10
Հերմետիկ	2,250
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
Բաշխիչ տուփ	10
Բաշխիչ տուփի խցուկ	10
Բաշխիչ տուփի առանցքակալ	10
Բաշխիչ տուփի ատամնանիվ	10
Բաշխիչ տուփի լիսեռ	10
Կարդանային լիսեռ	10
Էլաստիկ մուֆտ	10
Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	10
Կարդանային լիսեռի խաչուկ	10
6. Առջևի և հետևի կամրջակներ	
Հետևի կամ առջևի կամրջակ	10
Ռեդուկտոր	10
Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	10

Դիֆֆերենցիալ	10
Դիֆֆերենցիալի սատելլիտ	10
Տանող ատամնանիվի խցուկ	10
Տանող ատամնանիվի առանցքակալ	10
Դիֆֆերենցիալի առանցքակալ	10
Կիսասռնի	10
Կիսասռնու առանցքակալ	10
Կիսասռնու միջադիր	10
Կիսասռնու խցուկ	10
Կարգավորիչ տափողակ	
7. Կախոց	
Տրավերս	1,000
Կրոնշտեյն	1,000
Ձախ կամ աջ հոդակապ	60,000
Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	10,000
Անվակունդ	30,000
Անվակունդի խցուկ	3,000
Անվակունդի ներքին առանցքակալ	25,000
Անվակունդի արտաքին առանցքակալ	10
Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	25,000
Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	10
Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	5,000
Հարվածամեղմիչի թասակ	25,000
Զսպանակ	10
Առջևի հարվածամեղմիչ	60,000
Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10
Հարվածամեղմիչի վռան	10
Ներքևի լծակ	1,000
Ներքևի լծակի վռան	12,000
Վերևի լծակ	10
Վերևի լծակի վռան	10
Գնդե հոդակապ	19,000
Առջևի կայունարար	1,000
Առջևի կայունարարի վռան	7,500
Առջևի կայունարարի առջևի վռան	10
Հետևի զսպանակ	1,000
Հետևի ցնցամեղմիչ	50,000
Հետևի մետաղաձող (շտանգա)	10
Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	10
Հետևի անկյունագծային լծակ	10
Անկյունագծային լծակի վռան	10
Զսպակ (ռեսսորա)	[redacted]
Աջ կամ ձախ ձգան	15,500
Ծայրակալ	15,000
Ձգան մեջտեղի	10
Անվահեծ	1,000
8. Ղեկային մեխանիզմ	
Ղեկային կալուն	10
Ղեկային կալունի առանցքակալ	10

Ղեկային կայունի խաչուկ	10
Հիդրոուժեղարար	10
Հիդրոուժեղարարի փոկ	10
Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	20,000
Հիդրոուժեղարարի պոմպ	10
Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10
Ղեկային ձող	10
Ղեկային ձողի ծայրակալ	10
Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	5,000
Ճոճանակ	10
Ճոճանակի վռան	10
7. Արգելակային համակարգ	
Գլխ. գլան	5,000
Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10
Վակուումային ուժեղարար	1,000
Բանվ. գլան	10
Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10
Արգելակային փողրակ	5,000
Սուպպորտի ուղղորդիչ	10
Սուպպորտի մանժետ	10
Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	30,000
Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	30,000
Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	10
Առջևի արգելակային սկավառակ	30,000
Հետևի արգելակային սկավառակ	30,000
Ձեռքի արգելակի ճոպան	10
ABS-ի տվիչ	10,000
Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	3,500
Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2,000
Ձեռքի արգելակի ճոպան	10
9. Էլեկտրասարքավորում	
Գեներատոր	55,000
Գեներատորի դիոդային կամրջակ	30,000
Գեներատորի ռելե	30,000
Գեներատորի առանցքակալ	6,000
Ստարտեր	50,000
Ստարտերի ռելե	5,000
Ստարտերի ածուխ	15,000
Բենդեքս	10,000
Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	14,780
Առջևի լապտեր	1,000
Առջևի թարթիչ	10
Հետևի լապտեր	10
Հետևի թարթիչ	10
Արգելակային լապտեր	10,000
Լամպ	8,000
Էլեկտրական անջատիչ	1,000
Էլեկտրական տվիչ	1,000
Էլեկտրական չափիչ սարք	10

Բռնկման կոդպեք	5,000
Էլեկտրալարերի գլխավոր խուրց	1,000
Էլեկտրալարերի երկրորդային խուրց	1,000
Վառոցքային լարերի խուրց	10
Վառոցքի մոմի ծայրակալ	8,000
Վազքաչափ	10
Վազքաչափի ճոպան	[redacted]
Արագաչափ	10
Ազդանշան	3,000
Ապակելվացիչ	3,000
Ապակելվացիչի շարժիչ	5,000
Դռների կենտրոնական փական	5,000
Ազդանշանային համակարգ	10,000
Մագնիտոլա	10
Էլեկտրաամբարձիչ	4,000
Էլեկտրաամբարձիչի շարժիչ	5,000
Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր համար	4,000
Ընդամենը	**2,000,000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

Վ.Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«15» 03 2018թ. կնքված
ՊԳԿՎ-ԳՀՄՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130-1	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ			150000	400000	400000	400000	650000	650000	650000	1000000	1000000	1000000	**1000000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
***հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Վ. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«15» 03 2018թ. կնքված
ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք.Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Պատվիրատու
ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետ Ա.Օհանյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Բաղդասարյան, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«15» 03 2018թ. կնքված
ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն